№ 193 Նոյեմբերի 7 (19) 1879 Նոյեմբերի 7 (19) № 193

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարեկանը 6 րուբլի: Առանձին համարները 5 կոպէկով:

Յայտարարութիւններ ընդունվում են միայն խմբագրատան մէջ:

Յօդուածները ուղարկել հետեւեալ հասցէով: Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Տօնի և կիրակի օրերից)

Յայտարարութիւններ ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան մուսուլմանները. — Ներքին տեսութիւն. Նամակ Ալէքսանդրապոլից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Ամերիկա.—Մեծ Բրիտանիա. Հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Հայ երիտասարդութիւնը.

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ

Մինչեւ որ բոլոր ազգերի մէջ նշմարվում է ձգտում դէպի լուսաւորութիւն, դէպի մտաւոր առաջադիմութիւն, մեր կովկասեան մուսուլման եղբայրները, բացառած երկու միայն ազգայնականութիւնից, միշտ անշարժ են մնում: Նրանց մէջ չէ նշմարվում ոչ մի ցանկութիւն լուսաւորվելու, առաջ գնալու:

Միակ լուսաւոր երեւոյթ նրանց շրջանում, վերջին տարիներում, եղել է Բագուի մէջ թուրքերէն «Էկինչի» լրագրի հիմնելը, որ դժբաղդաբար շատ շուտ դադարեց, իսկ այժմ Թիֆլիսում «Զիա» թուրքերէն լրագրի հիմնելը:

Դժբաղդաբար և այս վերջին լրագիրը բաժանորդների շատ աննշան թիւ ունի:

Ի՞նչ է մեր թուրք եղբայրների դէպի լուսաւորութիւնը այդ տեսակ անտարբերութեան, այդ տեսակ անշարժութեան պատճառը:

Մեր կարծիքով գրագիտութիւնը և լուսաւորութիւնը տարածելու դժուարութիւնն է ա ր ա բ ա կ ա ն տառերի օգնութեամբ: Ինչպէս յայտնի է, պէտք է շատ տարիներ սովորել արաբական տառերը փոքր ի շատէ ազատ կերպով գրել և կարդալ կարողանալու համար:

Ապացոյց որ արաբական տառերը անյարմար են գրագիտութիւնը տարածելու, այն է, որ մուսուլմանների լուսաւորված մարդիկ պաշտպանողները իրանք էլ սկսում են զգալ թէ այդ տառերը պէտք է փոխել... Ահա վերջին ժամանակները երեւեցան փորձեր, ինչպէս օր. Շախթախթինսկու փորձը, արաբական այբենարանը փոխելու:

Բայց նոր այբենարան ստեղծելը հեշտ բան չէ: Պատմութիւնից մեզ յայտնի է, որ այբենարան ստեղծողները իրանց ամբողջ կեանքը էին նուիրում այդ գործին և ամբողջ կեանքը աշխատելուց յետոյ ծերութեան ժամանակ միայն յաջողվում էին ընծայել իրանց ազգին իրանց նոր հնարած այբենարանը:

Եւ Պօլսի մէջ այժմ բազմաթիւ թիւրք լրագիրներ հայոց տառերով են հրատարակվում և թիւրքերից շատերը հեշտութեամբ կարդում են այդ լրագիրները:

Մենք գիտենք որ արաբական տառերը սուրբ են մուսուլմանների համար: Մենք յարգում ենք նրանց այդ զգացմունքը, ինչպէս և յարգում ենք նրանց կրօնը: Ամեն ազգ թող իր սրբութիւնները ունենայ, ամեն մարդ թող պաշտի Աստուծուն ինչպէս աւելի լաւ է համարում: Ոչ մահմեդականը պէտք է աշխատի քրիստոնեային մահմեդական դարձնելու, ոչ էլ քրիստոնեան պէտք է աշխատի մուսուլմանին քրիստոնեայ դարձնելու: Բայց մենք պէտք է միմեանց օգնենք լուսաւորութիւնը տարածելու և տգիտութեան ու խաւարի դէմ պատերազմելու:

Մինչեւ երբ մենք պէտք է սառնասրտութեամբ նայենք, ինչպէս մեր մուսուլման եղբայրները, որոնք բնակվում են մեր Անդրկովկասեան հայերի հետ միասին, կատարեալ տգիտութեան մէջ են մնում, մինչեւ երբ անտարբեր կը մնանք այն տխուր երեւոյթին, որ մեր բանտերը լցված են մեծ մասամբ մեր մահմեդական եղբայրներով, աղքատութեան կամ ուրիշ յանցանքների համար: Իսկ ինչից են առաջանում թէ աղքատութիւնը և թէ այդ յանցանքները, եթէ ոչ տգիտութիւնից:

Թող արաբական տառերը սրբութիւն մնան մուսուլմանների համար, թող այդ տառերով գրվին նրանց սուրբ գրքերը, թող այդ տառերով պատուվի Աստուծու և մարգարէի անունը, բայց աշխարհական գործերի համար, ամենօրեայ հարցերի համար, թէ ինչպէս երեխաներին պէտք է մեծացնել, ինչպէս պէտք է հող վարել, ինչպէս պէտք է աշխատել,

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

[illegible]

digitised by ARAR

Թէպէտև պէտք է իր բարոյական, մտաւոր և տնտեսական դրութիւնը բաւացնել,—այդ բոլորի վրա կարելի է գրել աւելի հեշտ ռուսերէն լեզուով, որքան հայոց լեզուով, որոնց կարելի է սովորել մի քանի ժամվայ մէջ։ Կամ թէ չէ չը գրել թուրքերէն, բայց հայոց տառերով այն բանի վրա թէ ինչ է պատահում Եւրոպայում և այսպիսով ծանօթացնել ժողովրդականներին եւրոպական կեանքի հետ, թէպէտև այդ անում են Կ. Պոլսի «Մանզումէի Էֆքեար» կամ «Մէճմուայի Հաւադիս» լրագիրները։

Թո՛ղ հաւատան մեզ մեր թուրք եղբայրները. մենք նրանց հետ խառն ապրելով, միշտ եղել ենք և միշտ կը մնանք նրանց բարեկամներ։ Մեր նպատակները մի են, մեր շահերը համաձայն են։ Մենք նրանց դժբաղդութիւնը, որպէս կրօնասէր, չենք ցանկանում, այլ ամբողջ սրտից բարի ենք ցանկանում նրանց։

Մենք մի բան ենք ցանկանում միայն, այն է տեսնել մեր մահմեդական եղբայրներին մեր կարողութեան չափ մտցնել լուսաւորութիւնը նրանց ժողովրդի մէջ և ոչնչացնել տգիտութիւնը, որ միշտ եղել է ամեն մարդու, ամեն ազգի ամենամեծ թշնամին։

Մենք ամբողջ սրտից կը ցանկանայինք որ թուրքերի մայրենի, ազգային լեզուն զարգանար և ծաղկէր թէ նրանց դպրոցներում և թէ նրանց գրականութեան ու լրագրութեան մէջ։

Իսկ արաբական տառերով այդ անհնարին է անել, որովհետև արաբական տառերը շատ դժուար են ամփոփելու համար։

Նոյն թո՛ղ փորձեն մտցնել իրանց լրագրութեան մէջ հայոց տառերը, — և կը տեսնեն որ մի տասնեակ մէկ հինգ մեկ տարի և լուսաւորութիւնը աւելի շատ կը տարածուի ժողովուրդների մէջ այդ հինգ մեկ տարվայ ընթացքում, քան թէ մինչև այժմ դարերով կարողացաւ տարածուիլ։

Առաջին մտածմունքը որ և է պատահական թշնամութիւն մեր մէջ։ Անգրկոմիկար թուրքը և հայը խաղաղ միշտ բարեկամ պէտք է լինեն իրանց մէջ։

Այսպէս եղբայրաբար միմեանց մեկնելով մեր ձեռքը, օգնենք միմեանց ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՍԻՑ

28 Նոյեմբերի

[illegible]

digitised by A.R.A.R.@